

ԳՐԱԲԱՐԻ ՈՒ ԱՐԴԻ ԳՐԱԿԱՆ ՀԱՅԵՐԷՆԻ ՀՆՉԻՒՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ

ԵՒ ԵՐԿՃԻՐ ՀԱՅԵՐԷՆՆԵՐԻ ՄԵՐՁԵՑՄԱՆ ՀԱՄԱՌՕՏ ՔՆՆՈՒԹԻՒՆ

Հայերենի այբուբենի ստեղծման ու գործադրման շրջանում գրաբարի գրութիւնը լիովին համապատասխանել է արտասանութեանը, եղել է հնչիւնային: «Սակայն գրաբարի արտասանութիւնը միշտ նոյն կէտի վրայ չի մնում,– գրում է դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Արսէնի Աբրահամեանը: –Դարերի ընթացքում լեզուի արտասանական-հնչիւնական կողմը զանազան փոփոխութիւններ է կրում՝ հեռանալով գրութիւնից: Առաջ են գալիս ընդհանուր-պատմական (կամ աւանդական) հնչիւնափոխութեան զանազան երեւոյթներ, որոնց հիման վրայ ձեւաւորում են գրաբարի նոր արտասանութեան կանոնները, որոնք աւանդաբար հասել են մեզ: Մենք այժմ գրաբարեան բնագրերը կարդում ենք ոչ թէ հին կամ գրային արտասանութեամբ, այլ «նոր» փոփոխուած եւ վաղուց արդէն քաղաքացիութեան իրաւունք ստացած արտասանութեամբ» (տե՛ս Գրաբարի Ձեռնարկ, Երեւան, 1958, էջ 6):

Ընդհանուր-պատմական հնչիւնափոխութեան ճանապարհով հեռանալով գրային արտասանութիւնից՝ մերոպեան այբուբենի յօրինման շրջանի որոշ ձայնաւորներ, երկբարբառներ կրել են արտասանական փոփոխութիւններ, ձեւաւորուել են նոր ձայնաւորներ, որոնցից ու ձայնաւորը համապատասխան մասնագիտական կենտրոնների, խմբագիրների, որոշ քերականների, հրատարակիչների կողմից ցարդ որպէս տառ չի ընդունուում եւ դուրս է մնում նաեւ այբուբենի համակարգից:

Ու տառը արեւմտահայերենի այբուբենի համակարգից դուրս թողնելու պատճառը մերոպեան այբուբենն անխաթար ու անաղարտ պահպանելու միտումն է:

Տեսնենք, թէ արդի գրական հայերէնում որքա՛ն է պահպանուել ու անձեռնմխելի մնացել մերոպեան այբուբենի հնչիւնական համակարգն ընդհանրապէս:

Մեծն Մերոպ Մաշտոցն, ուսումնասիրելով գրաբարի հնչիւնները, մէկ հնչիւնին մէկ տառ սկզբունքով ստեղծել է հայերենի այբուբենը՝ 36 տառ. ըստ այդմ՝ մերոպեան այբուբենն ունեցել է հետեւեալ պատկերը՝

Ա Բ Գ Դ Ե Զ Է Ը Թ Ժ Ի Լ Խ Ծ Կ Զ Է Ը Դ Ը Ս Յ Ն Շ Ո Չ Պ Ջ Ռ Ս Վ Տ Ր Յ Ի Փ Ք

Գրաբարի 36 հնչիւններից 5-ը եղել են ձայնաւորներ. դրանք են՝ ա, ի, ը, է, ո:

Ձայնաւորներից ա-ն, ը-ն, ի-ն արդի գրական հայերենի (իր երկու ճիւղերով՝ արեւելահայերէն եւ արեւմտահայերէն) համապատասխան ձայնաւորներն են, իսկ է տառի համապատասխան հնչիւնը եղել է է, ո-ինը՝ օ:

Ժամանակի ընթացքում գրաբարի *է, ո* ձայնավորները բառասկզբում, ընդհանուր-պատմական հնչյունափոխության ենթարկուելով, փոխել են իրենց արտասանութիւնը, ըստ որում՝

ա) *է*-ն ձեռք է բերել երկբարբառային *էէ* արտասանութիւնը, օրինակ՝ *էրագը* կարդացուել է *էէրագ*, *էրկաթը*՝ *էէրկաթ*, *էրեքը*՝ *էէրեք*, հետեւաբար *է*-ն բառասկզբում դադարել է ձայնավոր լինելուց, մինչդեռ բառամիջում պահպանել է ձայնավորի արժէքը. օրինակ՝ *գէտ-գէտ*, *մէծ-մէծ*, *սէղան-սէղան*.

բ) ընդհանուր-պատմական հնչյունափոխութեամբ *ո* ձայնավորը բառասկզբում սկսել է արտասանուել *ւ/օ*. թակին կարդացուել է *ւ/օսկի*, *որդին*՝ *ւ/օրդի*, *որկորը*՝ *ւ/օրկոր*, ուստի բառասկզբում *ո*ն եւս կորցրել է ձայնավորի արժէքը, մինչդեռ բառամիջում *օ* արտասանուելով՝ պահպանել է այն. օրինակ՝ *աթռ-աթռ*, *գործ-գործ*, *խռնարհ-խռնարհ*, *կթռլ-կթռլ*, *հովիտ-հովիտ*:

Գրաբարի *է, ո* ձայնավորները բառասկզբում, արդէն դադարած լինելով ձայնավոր լինելուց, չպետք է տեղ ունենային գրական հայերէնի ձայնավորների շարքում, սակայն որպէս բառամիջի *օ, է*՝ միաժամանակ պետք է որեւէ ձեւով արտայայտուած լինէին:

Արեւմտահայ քերական Յովհաննէս Գազանճեանը բառամիջի *է*-ն, *օ*-ն արտայայտելու համար կիրարկել է փակագծերի մեթոդը, ըստ որում՝ *է, օ* ձայնավորների կողքին տալիս է *է, ո* տառերը, որպէս բառամիջի ձայնավորներ՝ *է*-ն, *օ*-ն փակագծեալ ներկայացնելով՝ *է, է(=է), օ, ո(=օ)* (տե՛ս Նոր Քերականութիւն Արդի Հայերէն Լեզուի, Բարձրագոյն Եւ Լրացուցիչ Դասընթացք, Իսթանպուլ, 1958, էջ 9):

Մանկավարժական գիտութիւնների դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Երեմի Տէր-Գրիգորեանը եւս կիրարկել է փակագծերի մեթոդը, սակայն *է, օ* ձայնավորներին զուգահեռ՝ որպէս բառամիջի *է, օ*, փակագծեալ է տուել *է, ո* տառերը՝ *է(է), օ(ո)* (տե՛ս «Այբբենարան», Երեւան, «Լոյս» հրատարակչութիւն, 1967):

Մենք աւելի պատճառաբանուած, նպատակային եւ հեշտընկալ ենք համարում՝

ա) որ որպէս բառամիջի *է, օ*՝ փակագծեալ տրուեն *է, ո* տառերը,

բ) այդ դէպքում բառասկզբում ձայնավոր լինելուց դադարած *է, ո* տառերը, ճիշդ ներկայացուելով, չեն յայտնուի ձայնավորների շարքում:

Ի դէպ, արեւմտահայերէնի համար փակագծեալ *է*-ն, *ո*-ն իրենց բառամիջի դիրքն է, քանզի արեւմտահայերէնում *է*-ով եւ, չնչին բացառութեամբ, *ո*-ով բառ չի վերջաւորուում, իսկ արեւելահայերէնի համար, դասական ուղղագրութեան փոփոխութեամբ պայմանաւորուած, նաեւ՝ բառավերջի դիրքը: Ուստի նոյն բառերը արեւմտահայերէնում կը գրուեն՝ *սեղան, մեղու, բերդ, բեկոր // հող, նոր, աթոռ, սափոր,*

արեւելահայերէնում նաեւ՝ *ափսե, բազե, թոպե, Վահե, Մանե, չափածո, պահածո, Սերո, Մարո, Կարո* եւ այլն:

Այս մեթոդը կիրարկուել է նաեւ ՀԲԸՄ-ի պատուերով եւ հովանաւորութեամբ լոյս ընծայուած «*Հայրենի Աղբիւր*» դասագրքում. Ա տարի (Երեւան, 1996, էջ 26. հեղինակներ՝ Ա.Ե. Տէր-Գրիգորեան, Ա. Թ. Աշճեան, Ա. Ն. Քիրքճեան), այլեւ՝ Անժէլ Ներսէսի Քիրքճեանի եւ Լիլիթ Աշոտի Տէր-Գրիգորեանի հեղինակակցութեամբ արեւելահայերէն տարբերակից արեւմտահայերէնի վերածուած «*Այբբենարան*»-ում («Լոյս» հրատարակչութիւն, Երեւան, 2001, էջ 32, 34):

Նշուած «*Այբբենարան*»ը գործադրուել է ԱՄՆ-ի, Կանադայի, Սիւրիայի՝ ՀԲԸՄ-ին պատկան դպրոցներում, որի՝ աշակերտների մակարդակին պատշաճեցնելու նպատակով համառոտուած տարբերակը ցարդ գործադրուում է Հալէպի Նաճարեան-Գ.Կիւլպէնկեան Կեդրոնական Վարժարանում, Հալէպի Միսիրեան եւ Պէյրութի Վահան Թէքէեան անուանակիր վարժարաններում:

Յետագայում արեւմտահայերէնի ձայնաւորների շարքում է, *օ* ձայնաւորներին զուգահեռ՝ *է-ն, ո-ն* փակագծեալ է տուել Կարօ Առաքելեանը՝ Հ(է), Օ(ո) (տե՛ս Արդի հայերէնի քերականութիւն. Գիրք Ա, Պէյրութ, 1999, էջ 77):

Քերականի այս մօտեցմամբ՝ ձայնաւորների շարքում է տառի նաեւ փակագծերից դուրս առկայութիւնն անշուշտ վրիպակ է՝ յատկապէս որ *օ* ձայնաւորին զուգահեռ՝ բառամիջի *օ-ն* տրուած է փակագծեալ՝ Օ(ո):

Արեւմտահայ որոշ քերականներ, անտեսելով ու շրջանցելով, որ *է-ն, ո-ն* ընդհանուր-պատմական հնչիւնափոխութեամբ բառասկզբում արդէն *էէ, յօ* են կարդացում, շարունակել են դրանք էլ թուարկել ձայնաւորների շարքում (տե՛ս Մկրտիչ Մկրտիչեան, Քերականութեան դասեր, Հալէպ, 1962, էջ 5, Զարեհ Մելքոնեան, Գործնական քերականութիւն արդի հայերէն լեզուի, Միջին եւ բարձրագոյն դասընթացք, Պէյրութ, 1996, էջ 11, Սիմոն Սիմոնեան Եւ Սարգիս Պալեան, Նոր քերականութիւն, Բ կարգ, Պէյրութ, 1967, էջ 12, Հ. Յակոբ Վ. Զանթայեան, Նոր Սեւան, Ընթերցարան Ա, Ս. Ղազար, Վենետիկ, 1979, էջ 7, Կարապետ Ճուհարեան, Գրաւոր վարժութիւն արդի հայերէն լեզուի, Ա-Բ տարի, Հալէպ, 1969, էջ 51, Յակոբ Զոլաքեան, Հայերէնի դասագիրքս, Գ, Հալէպ, 1991, էջ 5 եւ այլն):

...

Գրաբարի ձայնաւորների հետ կապուած ընդհանուր-պատմական հնչիւնափոխութեան գործընթացը նշուած փոփոխութիւններով չի սահմանափակուել:

Երբ գրաբարում *է-ն, ո-ն* բառասկզբում դադարել են ձայնաւոր լինելուց, է եւ *օ* հնչիւնների թափուր տեղերը պէտք է համալրուէին համապատասխան նոր տառերով:

Եւ ահա լեզուի հնչիւնային համակարգի կանոնարկման օրինաչափութիւններով եւ ներուժով պայմանաւորուած՝ այս դէպքում տեղի է ունեցել հակառակ գործընթացը. համապատասխան ձայնաւորներ են ձեւաւորուել երկրաբբառների՝ արտասանական փոփոխութիւններով, ըստ որի՝

ա) *էյ* արտասանութեամբ երկրաբբառային ձայնաւոր արժէքաւորուող *է*-ն, ընդհանուր-պատմական հնչիւնափոխութեան ճանապարհով ամփոփուելով, վերածուել է *է* պարզ հնչիւնի. այսպէս՝ *սէրը* կարդացուել է *սէր*, *տէրը*՝ *տէր*, *վէջը*՝ *վէճ*.

բ) ընդհանուր-պատմական հնչիւնափոխութեան երկարամեայ ընթացքի արդիւնքում *աւ* երկրաբբառը փակ վանկում վերածուել է *օ*-ի եւ արդէն 12-րդ դարից որպէս տառ յաւելուել մեսրոպեան այբուբենին (փակ ու բաց վանկերի համար հմմտ.՝ կար*աւ*տ>կար*օ*տ, ծան*աւ*թ>ծան*օ*թ, փառ*աւ*ք>փառ*օ*ք, ար*աւ*տ>ար*օ*տ, առաւ*աւ*տ>առաւ*օ*տ || կաք*աւ*, հ*աւ*, ն*աւ*, դ*աւ*, կ*աւ*, ց*աւ* եւ այլն).

գ) *ռռ*(*օս*) արտասանութեամբ երկրաբբառը եւս, պարզուելով, ամփոփուելով եւ օղի մէկ մղումով արտասանուելով, վերածուել է *ռ* պարզ ձայնաւոր հնչիւնի:

Աշոտ Արսէնի Աբրահամեանի վկայութեամբ՝ *ռ*-ի *ռ* եւ *ւ* բաղադրիչ տարրերը դեռեւս 5-րդ դարում խիստ սերտ արտասանութիւն են ունեցել, եւ ժամանակի ընթացքում արտասանութեամբ ձուլուելով՝ *ռ*-ն վերածուել է պարզ ձայնաւորի (տե՛ս նտ., էջ 5, տողատակի ծանօթութիւնը):

Արեւմտահայ որոշ քերականներ, վերանալով այն փաստից, որ *ռ*-ն արդէն արտասանուում է մէկ շնչով, արտաբերում է *ռ*, *ւ* տառերի ձոյլ արտասանութեամբ, նկատի ունենալով *ռ* ձայնաւորի երկտառ կազմութիւնը, այն համարել են *բաղադրեալ ձայնաւոր* (տե՛ս Յովհաննէս Գազանճեան, նտ., էջ 10, թիւ 26, Ջարեհ Մելքոնեան (նտ., էջ 11):

Յատկանշական է, որ Մելքոնեանը բաղադրեալ համարած *ռ* ձայնաւորն արժեւորում է որպէս մէկ գիր. ««Տուն» բառին մէջ կայ երեք գիր.- տ- ու- ն», - գրում է նա (տե՛ս նտ.):

Քերականներից մի քանիսը ձայնաւորների շարքում *ռ*-ն տալիս են՝ առանց կազմութեանն անդրադառնալու (տե՛ս Հ. Յակոբ Վ. Չանթայեան (նտ.), Յակոբ Չոլաքեան (նտ.), Կարօ Առաքելեան (նտ.):)

Սակայն, ինչպէս ասուեց, բոլոր համապատասխան կենտրոնները եւ իրաւասու անձինք միահամուռ համակարծիք են, որ *ռ* տառը, երկտառ գրութեան պատճառաբանութեամբ, բառիս բուն իմաստով *դուրս* թողնուի արեւմտահայերէնի այբուբենի համակարգից (*դուրս* բառը գրաբարի *դուռն* բառի յոգնակի *դուրք* տարբերակի հայցական հոլովն է, որ գործածուում է *դրսի դռան* իմաստով):

Ի դեպ, հանդուրժում է նոյնիսկ կոպիտ տառասխալ թոյլ տալ, միայն թե, Աստուած մի՛ արասցե, յանկարծ *ու* տառը չգործածուի. «Ասպարեզ» օրաթերթի «*Լուրեր գաղութներից*» վերնագրի «*Զաւարեան ուսանողական միութեան*» «*Դէպի Երկիրը*» ենթավերնագրի տակ Միութեան անունը յապաւում է «*ԶՈՄ*» ձեռով՝ փոխանակ «*ԶՈՒՄ*»-ի, հոգ չէ, թե դրանով նաեւ Միութեան անունն է աղաւաղում եւ սխալ կարդացում (տե՛ս չորեքշաբթի, 22 յուլիս, 2015):

Եւ մի՞թէ առաջնայինն ու էականը հնչիւնի արտաբերումը, արտասանութիւնը չէ. ի վերջոյ պէտք է պոկուել ու հնչիւնի երկտառ արտայայտութեան կարծրացած բարդոյթից ու մտասեւեռումից, պէտք է վերանալ բաղադրիչ տառերի անջատ գրութեան տեսողական պատկերից, եւ բաղադրիչ հնչիւնների միաձոյլ, մէկ շնչով արտասանութեամբ՝ ու հնչիւնի նշանը՝ գրային արտայայտութիւնը, մեսրոպեան այբուբենի մէկ հնչիւնին մէկ տառ սկզբունքով, մեր մտապատկերում կո՛ւրուագծուի ու կը ներկայանայ միմիայն մէկ տառանշանով:

Հետեւաբար արեւմտահայերէնի այբուբենի համակարգում *ու* տառին տեղ տալը ձայնաւորների մեսրոպեան գիտական համակարգի խաթարում եւ կամայական միջամտութիւն չէ, այլ՝ *ոու* երկբարբառի ընդհանուր-պատմական հնչիւնափոխութեամբ՝ որպէս պարզ ձայնաւոր հնչիւն, նաեւ իր գրային արտայայտութիւնն ունենալու թելադրանք:

Իսկ ո՞րն է *ու*-ի տեղը արեւմտահայերէնի այբուբենի համակարգում:

Տրամաբանական ենք համարում, որ իբրեւ *լիիրաւ տառ* (այլ ոչ թե որպէս *ւ* շաղկապը, որը մեսրոպեան այբուբենին յետագայում աւելացուած *օ*, *ֆ* տառերը շաղկապելու դերից՝ արեւելահայերէնի այբուբենում այդպէս էլ ամրագրուեց որպէս տառ)՝ *ու*-ն իր տեղը գրաւի մեսրոպեան այբուբենին յետագայում աւելացուած *օ*, *ֆ* տառերից առաջ՝ ...*ւ*, *փ*, *ք*, *ու*, *օ*, *ֆ*:

Այսպիսով՝ գրական հայերէնի այբուբենի համակարգը կ'ունենայ հետեւեալ պատկերը՝

Ա Բ Գ Դ Ե Զ Է Ը Թ Ժ Ի Լ Խ Ծ Կ Հ Ձ Ղ Ճ Մ Յ Ն Շ Ո Չ Պ Ջ Ռ Ս Վ Տ Ր Յ Ի Փ Ք Ռ Ի Օ Ֆ

Ինչ վերաբերում է *ու*-ի թուային արտայայտութիւն չունենալու վերաբերեալ առարկութիւններին, ապա մեսրոպեան այբուբենին յետագայում աւելացուած *օ*, *ֆ* տառերը եւս թուային արժէք չունեն:

Հայերէնի ձայնաւորների համեմատական սոյն ակնարկի փաստական տուեալների հաշուառմամբ՝ գրական հայերէնի ձայնաւորների համակարգն՝ իր երկու ճիւղերով, կ'ունենայ հետեւեալ դասաւորութիւնը՝ *ա*, *է*(*ե*), *ը*, *ի*, *օ*(*ո*), *ու*. 6 ձայնաւոր՝ արտայայտուած 8 տառերով:

Այսպիսով՝ գրական հայերենի երկու հատուածները կը միասնականանան գէթ ձայնաւորների հարցում:

Արդի գրական հայերենի ձայնաւորների համակարգը նշուած դասաւորութեամբ ընդունելը կը նպաստի արեւմտահայերէն բնագրերը արեւելահայերենի եւ արեւելահայերէնները արեւմտահայերենի վերածելիս ծագած դժուարութիւնների յաղթայարմանը (ի դէպ, «*Գրաբարի եւ արդի հայերենի ձայնաւորների համեմատական քննութիւն*» ծաւալուն յօդուածի (տե՛ս «*Զարթօնք*» օրաթերթ, 2001, 20 նոյեմբեր) շարժառիթը մեր՝ Լիլիթ Տէր-Գրիգորեանի հեղինակակցութեամբ հայրենի արեւելահայերէն «*Այբբենարան*»-ը արեւմտահայերենի վերածելիս այրեւմտահայերենի դասագրքերում ձայնաւորների մատուցման տարբերութիւններին դէմ յանդիման գալն էր):

...

Արեւմտահայ քերականները *ու* ձայնաւորի հետ կազմութեամբ *բաղադրեալ* են համարել նաեւ *էօ*(eu) եւ *իւ*(u) հնչիւնները, ըստ որի՝ որպէս թէ *իւ* հնչիւնը եւս հայերէն է թափանցել ֆրանսերէնի ազդեցութեամբ:

Յովհաննէս Գազանճեանը *էօ*(eu) հնչիւնի մասին գրում է. «*էօ* բաղադրեալ ձայնաւորով՝ որ նոր ժամանակներու մէջ *յարմարցուած է* (ընդգծումը մերն է՝ Ա.Ք.) օտար բառերու գրութեան համար, կը տառադարձուին ֆրանսերէն *eu*ի համարժէք հնչիւնները, նոր օտար բառերու և անուններու մէջ. օրինակ՝ *էօժէն*, *տորթէօր*, *էօտէմիշ* են.» (տե՛ս նտ., էջ 47, թիւ 91):

Յակոբ Թորոսեանը չի սահմանափակուում բաղադրեալ *էօ* ձայնաւորի՝ օտար բառերը տառադարձելու *յարմարցուած* դերով, այլ *իւ* բաղադրեալ ձայնաւորն էլ նկատի ունենալով՝ գրում է. «*Զգալի թերութիւն է նոր ուղղագրութեան մէջ զրկուած ըլլալ էօ* (ֆր. *eu*) եւ *իւ* (ֆր. *u*, գերմ. *ü*) ձայներէն: ... Կը կրկնենք՝ անհրաժեշտ է նոր ուղղագրութեան մէջ աւելցնել *էօ* եւ *իւ* բաղադրեալ ձայնաւորները (տե՛ս Լեզուաշինութիւն. Համագգային գրական լեզուի մը կերտումին ի խնդիր. Պէյրութ, 1964, էջ 33-34):

Զարեհ Մելքոնեանը ոչ միայն *ու*-ն՝ որպէս բաղադրեալ ձայնաւոր, *իւ*-ի «*ւ*» (հիւր), *էօ*-ի «*eu*» (*էօժէն*) թւում տառադարձում է օտարատառ «*ou*»ով (ջուր), այլեւ ծանօթագրում է այսպէս. «*Ou*», «*u*» եւ «*eu*» ձայները նկատի առնուած են ֆրանսական հնչումով» (տե՛ս նտ., էջ 11. ընդգծումները մերն են՝ Ա. Ք.):

Մեղմ ասած՝ ապշեցուցիչ է, որ հայ քերականները *ուու(ou)* երկբարբառի ընդհանուր-պատմական հնչիւնափոխութեամբ *ու* պարզ ձայնաւորի վերածուած «*ou*»ի

ձայնը» ֆրանսական հնչումով նկատի առնուած եւ հայերէնի նոր ուղղագրութեան մէջ ֆր. *էօ*(eu), *իւ*(u), գերմ. *յւ* ձայների բացակայութիւնը զգալի թերութիւն են համարում:

Կարօ Առաքելեանը *էօ* հնչիւնի մասին ունի հետեւեալ ծանօթութիւնը. «Ֆրանսերէն *eu* հնչիւնը արտաբերելու համար հայերէնը կը գործածէ *էօ*, որ կազմուած է երկու ձայնաւոր հնչիւններէ»: Իսկ երկտառ *իւ* հնչիւնին, ֆրանսերէն փակագծեալ *ս* համարժեքով հանդերձ, տեղ է տալիս նաեւ հայերէնի ձայնաւորների շարքում. «Հայերէնի ձայնաւորներն են՝ *ա, է, է (ե), ը, ի, օ (ո), ու, իւ (ս)*» (տե՛ս նտ.):

Յովհաննէս Գազանճեանը 1958թ. ակնարկ անգամ չունի *իւ* հնչիւնի օտարամուտ լինելու մասին, սակայն նա նոյնպէս *ու* եւ *իւ* հնչիւնները դնում է նոյն նժարի վրայ. «Հայերէնի մէջ կան երկու պարզ հնչիւններ (իսկական ձայնաւորներ),– գրում է նա,– որոնք առանձին տառ չունին, այլ կը գրուին ձայնաւորի մը եւ կիսաձայնի մը միացումով: Ասոնք են *ու* եւ *իւ* հնչիւնները որ կը կոչուին *բաղադրեալ ձայնաւոր* (տե՛ս նտ., էջ 10):

...

Արեւմտահայ քերականներից ոմանք *իւ*-ն համարել են թե՛ ձայնաւոր, թե՛ երկբարբառ:

Յովհաննէս Գազանճեանը, թուարկելով արդի հայերէնի բուն երկբարբառները՝ *այ, ոյ, էա, էայ, էօ* (*էայ*-ն եռաբարբառ է՝ Ա.Բ.), աւելացնում է. «Ասկէ զատ՝ ունինք երկբարբառային *ենու* կամ *իու* հնչումը որ *իւ* բաղադրեալ ձայնաւորով կը գրուի. օրինակ՝ *իւր, միւս արիւն, նեղութիւն* են. բառերուն մէջի *իւ*-ն որ հնչումով կը տարբերի *հիւր, հիւս, սիւն* են. բառերու *իւ*-էն», այլեւ՝ «*Իւ* բաղադրեալ ձայնաւոր է եւ մերթ *երկբարբառային հնչում ունի* (իբրեւ *ենու*) *երկու բաղաձայններու միջեւ*. օրինակ՝ *հիւթ, կորիւն*» (տե՛ս նտ., 10, այլեւ՝ էջ 22, թիւ 47. ընդգծումը մերն է՝ Ա. Բ.):

Կարօ Առաքելեանը *իւ*-ն համարում է նաեւ երկբարբառ՝ *ենու* արտասանութեամբ, եւ որպէս օրինակ՝ տալիս է միայն *-ութիւն* ածանցաւոր բառեր *ուրախութիւն, աշակերտութիւն* (տե՛ս նտ., էջ 79), իսկ *իւ* ձայնաւորը գտնելու վարժութիւններում առաջադրում է *առիւծ, կորիւն* (նտ., էջ 75), *սիւն, ալիւր* (նտ., էջ 77) բառերը:

Յակոբ Չոլաքեանը *այ*-ի, *ոյ*-ի, *էա*-ի թում *իւ*-ն արժեքաւորում է միայն որպէս երկհնչիւն եւ *իւ* երկհնչիւնը գտնելու առաջադրանքում տալիս է *սկիւռ, առիւծ, ձիւն, նիւթ*, ելեկտրականութիւն բառերը (տե՛ս նտ., էջ 37):

Ընդգծեցինք, որ Գազանճեանը *իւ*-ն երկբարբառ է համարում, երբ այն երկու բաղաձայնների միջեւ է. ըստ այդմ՝ առաջին խմբի բառերից միայն *իւր* բառի *իւ*-ն է ձայնաւոր, քանի որ բառն *իւ*-ով է սկսւում եւ երկու բաղաձայնների միջեւ չէ, իսկ միւս

բառերի եւ երկրորդ խմբի բոլոր բառերի *իւ*-ն *երկբարբառ* է (հ*իւ*ր, հ*իւ*ս, ս*իւ*ն, հ*իւ*թ, կոր*իւ*ն):

Արդ՝ ամենակարեւոր ու էական երկու հարց.

ա) *իւ*-ն ֆրանսերէնի՞ ազդեցութեամբ հայերէն թափանցած *ս* հնչիւնն է,

բ) *իւ*-ն ձայնաւոր՞ ր, թե՞ երկբարբառ:

Համեմատելով արեւմտահայ քերականների բերած բոլոր օրինակները՝ դժուար չէ նկատել, որ բացի Գազանճեանի տուած առաջին խմբի *իւր* բառից՝ բոլոր օրինակներում *իւ*-ն երկու բաղաձայնների միջեւ է, ուստի *երկբարբառ* է, կամ Չոլաքեանի անուանմամբ՝ երկհնչիւն:

Դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Արսէնի Աբրահամեանը գրաբարի *այ, աւ, էա, եւ, ոյ, տ* երկբարբառների թւում դիտարկում է նաեւ *իւ*-ն՝ այն բնորոշելով երկձայն արտասանութեամբ՝ թնդ*իւ*ն, հ*իւ*սել, սրտ*իւ*ք (=սրտերով)» (տե՛ս նտ., էջ 8): Ապա անելացնում է. «Սրանց մէջ պէտք է հաշուի առնել նաեւ *է*-ն(=ե+յ) եւ *ու*-ն(=ո+ւ), որոնք ժամանակի ընթացքում վեր են ածուել պարզ ձայնաւորների...» (տե՛ս նտ., էջ 6):

Նկատենք, որ *իւ* երկբարբառի համար Ա. Աբրահամեանը տալիս է *ձիւն, նիւթ, սիւն* բառերը, որոնք կան նաեւ Յ. Գազանճեանի (ս*իւ*ն), Յ. Չոլաքեանի (*ձիւն, նիւթ*) օրինակների թւում:

Ժամանակաշրջանի առումով՝ ինչպէս գրաբարի *աւ, էյ, ոու* երկբարբառները, *իւ* երկբարբառը եւս 21-րդ դարի համեմատութեամբ արտասանական փոփոխութեան ենթարկուած կը լինի հաւանաբար, սակայն անառարկելիօրէն պարզ է, որ *իւն*՝

ա) ձայնաւոր հնչիւն չի եղել եւ չէ,

բ) առաւել եւս՝ բացառուում է, որ դա ֆրանսերէնի ազդեցութեամբ հայերէն թափանցած օտարամուտ *ս* հնչիւնը լինի:

Այլ կերպ չէր էլ կարող լինել, քանզի լեզւում նոր տառ կարող է առաջանալ հասարակայնօրէն ճանաչում գտած եւ արժեքաւորուած հնչիւնի համար եւ, ինչպէս տեսանք, ընդհանուր-պատմական հնչիւնափոխութեան ճանապարհով միայն:

Ֆ տառը բացառութիւն է: Այդ կապակցութեամբ պրոֆ. Աշոտ Աբրահամեանը գրում է. «Գրաբարը չի ունեցել *ֆ* հնչիւնը: Փոխառեալ բառերի մէջ այդ հնչիւնի դիմաց գործածուել են *փ* եւ *հ* հնչիւնները, ինչպէս օրինակ՝ ... *փիլիսոփայ* (φιλοσοφος), *հրասախ* կամ *փարսախ* (չափի միաւոր է, փոխառութիւն է պարսկերէնից): Ժամանակի ընթացքում գիտակցուել ու արժեքաւորուել է *ֆ*-ն որպէս հնչոյթ, եւ դրա հետեւանքով էլ այբուբենում անելացուել է *ֆ* տառը: Եւ այդպիսով փոխառեալ բառերում այդ հնչիւնն այլեւս չի փոխարինում այլ հնչիւններով եւ գրութեան մէջ էլ արտայայտուում է յատուկ տառով...» (տե՛ս նտ., էջ 9):

Վերադառնանք այն հարցին, թե արդեօ՞ք բնիկ, զուտ հայերեն են իւ երկրաբառն ունեցող վերոնշեալ բառերը:

«Հայերէնի մէջ հնդեւրոպական են ամենէն աւելի այն արմատները, որոնք կը կազմեն ընկերութեան, ժողովուրդի մը ամենանախնական, ամենաեական եւ ամենագործածական բառերը», – գրում է Յակոբ Թորոսեանը իր «*Հայերէնի ճոխութիւնը*» ուսումնասիրութեան մէջ (Պէյրութ, 1966, էջ 6):

Նշուած բնագաւառներից Թորոսեանի քաղած սակաւաթիւ օրինակների թւում են *աղբիւր, անկիւն, առիծ, բիւր, եղջիւր, հիւլէ, ձիւն, միւռոն, մրջիւն*, մօտ 200 վերջածանցներից – *իւն* վերջածանցաւոր բնաձայն *գոչիւն, զանգիւն, մայիւն* բառերը, – *ութիւն* վերջածանցաւոր *չարութիւն, բարութիւն* բառերը (տե՛ս նաև, էջ 10-13):

Կարելորում ենք, որ – *իւն* վերջածանցաւոր բնաձայն բառի օրինակ տալիս է նաեւ պրոֆ. Աբրահամեանը՝ *թնդիւն, –ութիւն*, ածանցաւոր բառերի օրինակներ՝ *Չոլաքեանը, Առաքելեանը*, իսկ *Չոլաքեանի* օրինակներից երկուսը՝ *առիծ, ձիւն* բառերը, Թորոսեանի քաղած սակաւաթիւ բառերի թւում են:

Հայերէնը հնդեւրոպական ընտանիքում ուրոյն ճիւղ է, որի բառապաշարում «Ըստ Հրաչեայ Աճառեանի խղճամիտ հաշուումներուն, մեր լեզուին մէջ ունինք... յունական ծագումով մօտ 1000 փոխառեալ բառեր» (տե՛ս Յակոբ Թորոսեան, նաև, էջ 5):

Եթէ հայերէնը հնդեւրոպական ընտանիքում ուրոյն ճիւղ է, ուրեմն՝

ա) կարելի՞ է դոյզն ինչ կասկածել, որ նրա բառապաշարի կազմաւորման շրջանում յունաբան դպրոցից փոխառեալ բառերը զուտ, բնիկ հայերէն են,

բ) հետեւաբար չի՞ բացառում արդեօք, որ Յ. Թորոսեանի հաշուումներով՝ հայերէնում մօտ 1000 փոխառեալ բառերի *իւ* հնչիւնը ֆրանսերէնից գրաբար եւ արդի գրական հայերէն թափանցած *ս* ձայնաւորը լինի, այլ՝ *իւ երկրաբառը*, կամ Յ. Չոլաքեանի ասած՝ երկհնչիւնը:

Եզրակացութիւնը թողնում ենք մեսրոպատառ մայրենին օտարամուտ տառերից եւ բառերից զերծ պահելուն նախանձախնդիր ընթերցողին:

...

Այժմ՝ համառօտ ակնարկ մեսրոպեան այբուբենի բաղաձայնական համակարգի մասին:

Մեսրոպ Մաշտոցն հայերէնի այբուբենն ստեղծել է մէկ հնչիւնին մէկ տառ սկզբունքով. գրաբարի բաղաձայնական համակարգը եղել է եռաշարք՝ *ձայնեղ, խուլ, շնչեղ խուլ՝ ք-պ-փ, գ-կ-ք, դ-տ-թ,...*, այլապէս Մաշտոցը իւրաքանչիւր շարքի համար առանձին տառ չէր ստեղծի:

Արեւելահայերէնը պահպանել է մեսրոպեան բաղաձայնական համակարգը՝ եռաշարք գրութեամբ ու արտասանութեամբ, մինչդեռ արեւմտահայերէնն ունի բաղաձայնների եռաշարք գրութիւն՝ սակայն երկշարք արտասանութեամբ:

Արեւմտահայ քերականները բաղաձայններն, ըստ իրենց արտասանութեան, բաժանում են երեք խմբի՝ *նուրբ, միջակ, թաւ*: Միջակների եւ թաւերի հնչումները գրեթէ նոյնացել են ու վերածուել երկուսի (տե՛ս Յովհ. Գազանճեան, նտ., էջ 11, Զ. Մելքոնեան, նտ., էջ 140), «այնպէս որ,– շարունակում է Մելքոնեանը,– իրականութեան մէջ՝ ունինք երկո՛ւ աստիճան միայն: ...Արեւմտահայերէնի աստիճանակարգումը կարելի է ներկայացնել այսպէս.

Ա. – կ, տ, պ, ճ, ծ

Բ. – ք-փ, գ-ք, դ-թ, ջ-չ, ձ-ց» (տե՛ս նտ.):

Բերենք օրինակներ՝ *Ա. – կալիճ, տուն, պանիր, ճանճ, ծիրան, Բ. – քերան-փուռ, զիր-քար, դաս-թոռ, ջուր-չամիչ, ձայն-ցորեն*:

Արեւմտահայերէնի բաղաձայնական համակարգի՝ մեսրոպեան այբուբենի համեմատութեամբ տարբերութիւնը այբուբենի գիտական համակարգի խաթարում չէ: Խնդիրն այն է, որ արեւմտահայերէնը եւ արեւելահայերէնը ձեւաւորուել-կազմաւորուել են՝ հիմք ունենալով տարբեր ճիւղերի բարբառներ (ի դէպ, բարբառի ճիւղը որոշում է բայի սահմանական եղանակի ներկայ ժամանակի կազմութեամբ՝ *կը* գրեմ՝ *կը* ճիւղ, *գրում եմ՝ ում* ճիւղ):

Արեւմտահայերէնի հիմքում *կը* ճիւղի Պոլսի բարբառին յատուկ երկշարք բաղաձայնական համակարգն է, իսկ արեւելահայերէնի հիմքում՝ *ում* ճիւղի եռաշարք համակարգն ունեցող Արարատեան բարբառը:

Նշուած ու խոնարհման, հոլովական եւ այլ տարբերութիւններով պայմանաւորուած՝ ընդհանուր-միասնական հայերէնը երկատուել-երկփեղկուել է երկու՝ արեւմտահայերէն եւ արեւելահայերէն ճիւղերի:

Մէկ դար առաջ օտարուելով իր պատմական երկրի արեւմտեան հատուածից, զրկուելով իր բնօրրանից եւ սփռուելով աշխարհով մէկ՝ հայութիւնը երկատուեց նաեւ տարածքային առումով, եւ գոյացաւ Սփիւռք հասկացութիւնը. արդիւնքում՝ գրական հայերէնի երկու ճիւղերը կազմաւորուեցին տարբեր միջավայրերում՝ Հայրենիք-Սփիւռք տարածքներում:

Հայերէնի ներքին օրինաչափութիւններով զարգանալով ու հարստանալով հանդերձ՝ գրական հայերէնի երկու ճիւղերին էլ վիճակուած էր մեսրոպատառ մեր մայրենին անաղարտ եւ ուժացումից զերծ պահելու դժուարին առաքելութիւնը:

Արդարեւ դժուար առաքելութիւն՝ յատկապէս Սփիւռքում, երբ գաղթօճախները տարբեր մակարդակների հայախօս են, եւ իւրաքանչիւր մամուլ, դպրոց անգամ ունի հայերէնի ուսուցման իր կանոնակարգը, հայերէնի իր դասագրքերը:

Յիրաւի «*Բազմալեզու հայերս*», ինչպէս որ գրում է «*Ասպարէզ*» օրաթերթի աշխատակից Կարինէ Տէր-Գեորգեանը իր «*Առօրեայ մտորումներից. Խճանկար դպրոցից*» ակնարկում (տե՛ս չորեքշաբթի, փետրուար 3, 2010):

Սփիւռքում սփիւռքահայը այդ դժուարին առաքելութեանը նպաստում է հնարաւոր բոլոր միջոցներով՝ գրչով, բանիւ ու գործով՝ գրական-մշակութային, հայա-հայերէնապահպան տարաբնոյթ միջոցառումներ, ասմունք, ազգային երգ ու պարեր, հայրենի հեռուստահաղորդումների ունկնդրման ծրագիր, ամենաառաջնայինը՝ ընտանեկան հայեցի դաստիարակութիւն, ի գին մեծ զոհողութիւնների՝ հայկական կրթութիւն ու մեսրոպատառ մայրենիի ուսումնառութիւն հայկական ամենօրեայ կամ միօրեայ դպրոցներում եւ բազմապիսի այլ հնարներ:

Հայրենիքում բոլորովին այլ կարգավիճակում է հայերէնը անաղարտ պահպանելու գործընթացը. որպէս պետական լեզու՝ այն կանոնակարգում է Հայաստանի Հարապետութեան կառավարութեանն առընթեր Լեզուի պետական տեսչութեան կողմից:

Այնուամենայնիւ, կարիքը միշտ էլ եղել է եւ այժմ էլ կայ՝ մայրենիի կանոնադրութեան իրագործումը վերահսկելու՝ յատկապէս վերջին շրջանում, երբ Հայրենիք-Սփիւռք մշակութային, տնտեսական, գործարքային եւ բազմազան այլ բնոյթի կապերի աշխուժացման ու սերտացման պայմաններում օտար բառեր, բառակապակցութիւններ, արտայայտութիւններ են ներթափանցում հայերէն:

Խօսքը չի վերաբերում այնպիսի բառերի, որոնք օտար չեն էլ հնչում հայի ականջին, ինչպէս *ֆուտբոլ* բառը, որը որպէս խաղ եւ խաղի անուն՝ փոքրից մեծ բոլորին քաջ ծանօթ եզր է, եւ նրա բառացի թարգմանութեամբ յօրինուած *ոտնագնդակ* բառը նշանակում է *ոտքի գնդակ* եւ խաղի անուն էլ չէ. կամ՝ *պաստառ* բառը, որը առնչութիւն չունի «*շարժանկարի կամ հեռատեսիլի լուսարձակումի խորք*» իմաստի հետ, եւ հաւանաբար դրա համար է որ Անդրանիկ Վրդ. Կոանեանը իր հեղինակած բառարանում *պաստառ* բառի նշուած բացատրութեան զուգահեռ՝ փակագծեալ տալիս է նաեւ *էքրան* օտար բառը (տե՛ս Գործնական բառարան հայոց լեզուի, Պէյրութ, 1970):

Հայերիս համար խորապէս հասկանալի է մայրենին անաղարտ պահպանելու գերնպատակը, սակայն նախընտրելի է գործածել համաշխարհային ճանաչում գտած եզրը, բառը, բառակապակցութիւնը, քան թէ յօրինել կամ գործածել նրանց հայերէն բառակազմական անյաջող պատճէնումները:

Հայրենիքում եւս պետական մակարդակով բոլոր միջոցները գործադրում են՝ ծայրայեղ աստիճանի զգոյշ, զգօն եւ աշալուրջ հետեւելու, որ կերտունն օտար ներթափանցումների այնպիսի համարժեքներ, որ մեսրոպատառ մեր մայրենին չխաթարուի խեցքեկ՝ աղաւաղուած, աղճատուած բառերով, բառակապակցութիւններով, արտայայտութիւններով:

...

Անշափ կարելոր է նաեւ արդի գրական հայերէնի բառապաշարի հարստացումն ու ճոխացումը՝ երկու ճիւղերին յատուկ բառերի, բառակապակցութիւնների, ոճական արտայայտութիւնների, դարձուածքների փոխադարձ ներթափանցմամբ:

Դա հնարաւոր դարձաւ յատկապէս վերջին շրջանում, երբ բազմատեսակ, տարաբնոյթ միջոցառումների շնորհիւ աւելի սերտացաւ Հայրենիք-Սփիւռք փոխադարձ կապը, ինչպիսիք են՝ սփիւռքահայ երեխաների՝ հայրենի ճամբարներում ամառային հանգիստ, կամաւոր աշխատողների բազմազան ծրագրեր, բազմաբնոյթ այլ միջոցառումներին մասնակցող հայորդիների փոխադարձ այցելութիւններ, հայապահպանութեանը միտուած «Մայրենիի պաշտպան», «Լաւագոյն ամենօրեայ կրթութիւն» անուանակարգերի մրցոյթներին մասնակցութիւն, սփիւռքահայ երեխաներին, երիտասարդներին Հայրենիք կանչող «Արի՛ տուն» ծրագիր, «Բազէ» համահայկական երիտասարդական հաւաք՝ նաեւ սփիւռքահայ երիտասարդների մասնակցութեամբ, տարիքային բոլոր խմբերի աշխարհասփիւռ հայ մարզիկների ու մարզուհիների (թուով՝ 6352) Համահայկական 6-րդ ամառային օլիմպիական խաղերի (17 մարզաձեւ) մասնակցութիւն, որը «Եթեր» շաբաթաթերթի «Երիտասարդական» տեղեկատու էջում ներկայացուեց «Համահայկական միասնութիւն սպորտով» վերնագրի տակ (տե՛ս 06.08.15), Հայրենիք ներգաղթած ընտանիքների եւ, ցաւօք, արտագաղթածների համակցութեամբ փոխադարձ շփումներ...

Բնականոն էր եւ օրինաչափ, որ նշուած առնչութիւնների պայմաններում գրական հայերէնի երկու ճիւղեր ներթափանցէին միջոցառումների բնոյթով պայմանաւորուած բազմաթիւ եզրեր, բառակապակցութիւններ, ոճական արտայայտութիւններ, շփման համապատասխան պահերին՝ առօրեայ գործածական կենցաղային, Հայոց աշխարհի եւ հայրենի հողի բարիքներին ու բնութեանը վերաբերող բառեր...

Բացի բառապաշարային ներթափանցումներից՝ վերոնշեալ փոխադարձ շփումների հետեւանքով արեւմտահայի խօսքում ականջալուր ենք լինում նաեւ քերականական բնոյթի ներթափանցումների՝ արեւմտա-արեւելահայերէն խոնարհուած բայաձեւեր, երկու ճիւղերի հոլովական վերջաւորութիւններով հոլովաձեւեր, այլեւ՝ միայն արեւելահայերէն հոլովաձեւեր, ինչպէս՝ անձնանիշ

գոյականի տրականաձեւ հայցականը՝ Երեխան կը սիրէ *մայրիկին՝* փոխանակ՝ *մայրիկը*, -*ու՛մ* վերջաւորութեամբ ներգոյական հոլովը՝ հայցական հոլովի կամ մէջ կապով ձեւաւորուած ներգոյական հոլովի իմաստի փոխարէն՝ Երեխան կը խաղայ *բակում՝* փոխանակ՝ *բակը*, Կարգապահ ըլլանք *դասարանում՝* փոխանակ՝ *դասարանին մէջ*:

«Արեւի պէս յստակ է որ արեւմտահայերէնի բառամթերքը ու քերականութիւնը հակադրել արեւելահայերէնին ծիծաղելի է,– կարդում ենք Խաչատուր Փիլիկեանի *«Հայոց լեզուի հնչիւնաշարի արարատեան ու արեւմտեան տարբերակները»* յօդուածում,– փոխանակ հայոց լեզուի հարստութիւնը տեսնելու նաեւ ատոր մէջ (տե՛ս «Նոր օր», 2013, էջ 9)»:

Արեւմտահայերէնի եւ արեւելահայերէնի մերձեցման կապակցութեամբ տեղին է մէջբերել գրող, արեւմտահայերէնի դասագրքերի հեղինակ Յարութիւն Քիրքճեանի հետ *«Նոր յառաջ»*-ի շահեկան գրոյցից համապատասխան հատուածներ. «Լեզուի կենդանի ընթացքը մեծ չափով ինքնաբաւ է ու ինքնավար, եւ միայն յետադարձ, a posteriori սրբագրումներ կրնայ ընդունիլ, այն ալ՝ որոշ չափով: Պէտք է աշխատիլ բառեր ու լեզուաձեւեր երկուստեք շփման դնելու, ըմբռնելի դարձնելու ուղղութեամբ, թողելով որ կեանքն ու կեանքի շփումները վճռեն...

... Բառակերտումի գետինի վրայ կ'արժէ հասարակաց դարձնել մէկ կամ միւս լեզուաճիւղի յաջող բառակերտումները, վերցնել ձախորդները, սկսած անշուշտ օտարամուտներէն կամ անոնց վրայ ընդօրինակուած-ձեւաւորուածներէն...» (տե՛ս *«Արեւմտահայերէնի եւ արեւելայերէնի մերձեցման խնդիրներ»* թեմայով Համաժողովին *ընդառաջ՝ գրոյցը* («Ազատ օր», Յունաստան, 20 յուլիս 2015)):

Այո՛, արեւմտահայերէնի եւ արեւելահայերէնի մերձեցման համար վճռորոշ են լինելու լեզուի ինքնաբաւ ու ինքնավար ընթացքը, հենց ի՛նքը կեանքը եւ կեանքի շփումները, բառապաշարային եւ քերականական ձեւերի ինքնըստինքեան փոխադարձ ներթափանցումները, եւ ոչ թէ (կամ՝ ոչ այնքան հաւանական է) թէկուզ ակադեմիական մակարդակի գեկոյցներն ու ներկայացուցչական յանձնախմբերի մշակած-կայացրած որոշումներն ու առաջադրած հրահանգները:

Երկճիւղ հայերէնների մերձեցման համար անշուշտ կարելոր է նաեւ ուղղագրութեան մերձեցումը, որը տարողունակ եւ ընդգրկուն լինելով՝ սոյն յօդուածում քննութեան նիւթ չէր կարող լինել:

Սակայն մի բան պարզ է ու յստակ. եթէ ուղղագրութեան մերձեցման խնդիրները կարելի է քննարկել, կանոնակարգել-կանոնարկել արեւմտահայ եւ արեւելահայ մասնագէտ, իրաւասու յանձնախմբերում ու համաժողովներում եւ փոխադարձ

համաձայնությամբ համապատասխան որոշումներ կայացնել ու օրենքներ սահմանել, ապա բառապաշարի, բառակապակցությունների, ոճական արտայայտությունների, դարձուածքների, առաւել եւս՝ քերականական ձեւերի ներթափանցումների արդիւնքում երկու ճիւղերի մերձեցումը երկարատեւ ժամանակի կարօտ գործընթաց է...

Սակայն Հայը լիայոյս է իր գոյատեւումին, եւ վերոնշեալ փոխափանցումների արդիւնքում ոչ միայն երկճիւղ հայերէնները պիտի մերձենան, այլեւ *ինչպէս հայերէնի զարգացման նախորդ փուլերը՝ հայերէն միասնական լեզուի ձեւաւորման-կազմաւորման ժամանակաշրջանը եւս պիտի ընթանայ հայերէնի զարգացման օրինաչափ, բնականոն հոլովոյթով, եւ ինչպէս մինչ ընհանուր-միասնական հայերէնի երկատում-երկփեղկումը, որպէս մէկ ազգի նաեւ միասնական լեզու ունենալու անքակտելի աղերս՝ փիւնիկի պէս վերակենդանացող Հայի յետնորդ պարման-պարմանուհիների շուրթերից նորից պիտի հնչի* հայերէնի երկու ճիւղերի առաւել կենսունակ բառագանձով, քերականական կոտ կառուցուածքով, շոայլօրէն գեղեցիկ ոճական արտայայտություններով համեմուած, հարստացած ու կանոնարկուած գրական հայերէնի երկու ճիւղերին ընդհանուր հայերէնը՝ *մեսրոպատառ միասնական մեր մայրենին*:

Բի՛ւր երանի լսողաց...

5 հոկտեմբեր 2015
Երեւան

Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
Անժէլ Ներսէսի Քիրքճեան